ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1955 Общественные науки

Ֆ. Ա. Ալեքսանյան

ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ «ՖԻԶԻԿԱԿԱՆ» ԻԴԵԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Էնգելսից հետո, Լենինն առաջինն էր, որ կատարեց XIX դարի վերջի և XX դարի սկզբի ամբողջ բնագիտության մեծագույն մատերիալիստական-դիալեկտիկական ընդհանրացումը և տվեց ֆիզիկայի բնագավառում եղած իդեալիզմի կլասիկ քննադատությունը։

Մեծ Լենինի փիլիսոփայական ժառանգությունը և առանձնապես նրա «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը, անսպառ աղբյուր է ՍՍՌՄ-ում մատերիալիստական բնագիտության ծաղկման, առաջավոր գիտության զարգացման համար։ XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի փիլիսոփայական իդեալիզմի լենինյան քննադատությունը դարձավ արդի իդեալիզմի այլատեսակությունների գիտական քննադատության ուղեցույց աստղը. մեթոդոլոգիական հզոր զենք, կոմունիստների, մարտնչող մատերիալիստական գիտության բոլոր մարդկանց ձեռքին՝ խավարամոլների և օրսկուրանտիզմի փիլիսոփայության դեմ նրանց մղած պայքարում։

XIX դարի վերջին և XX դարի սկզբի «ֆիզիկական» իդեալիզմին վերաբերող գրականության մարքսիստական վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ այդ գրականության գլխավոր թերությունը գնոսեոլոգիական այն եզրակացությունների անտեսումն է, որ արվում են «նոր ֆիզիկայից», ժամանակակից բնագիտությունից։

Արդի ֆիզիկայից արվող գնոսեոլոգիական եզրակացությունների անտեսման վտանգը, նախազգուշացնում էր Վ. Ի. Լենինը, եղել է և շարունակում է մնալ այն, որ նա կարող է հանգեցնել իդեալիզմի դիրքերի ուժեղացմանը ֆիզիկայի բնագավառում ի վնաս դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերի։ Ելնելով դրանից, Վ. Ի. Լենինը պահանջում էր սերտ կապ հաստատել փիլիսոփայական մատերիալիզմի և արդի բնագիտության միջև։ Լենինի այդ պահանջը հետապնդում էր իդեալիզմն ու ագնոստիցիզմը բնագիտության բնագավառից վռնդելու, բնագիտության մեջ դիալեկտիկական մատերիալիզմի հաղթանակի և մատերիալիստական բնագիտության հաջող զարգացման համար ասպարեզ ստեղծելու նպատակը։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ դա միակ ուղին է բնագիտությունը փրկելու ագնոստիցիզմից և այն դեգրադացիայից, որի առաջ կանգնած էր նա։

Բնագիտությունը,— ասում է Լենինը,— կարիք էր զգում գիտական փիլիսոփայական թեորիայի, անհրաժեշտ էր դիտական փիլիսոփայական բազա ստեղծել ամբողջ բնագիտության նվաճումների համար և առանձնապես այն նվաճումների, որոնք կոչվում էին «ռևոլյուցիա ֆիզիկայի մեջ»։ Մյուս կողմից, Լենինն ընդգծում էր բնագիտության մեջ կատարված այդ ռևոլյուցիայի վիթխարի նշանակությունը գիտական փիլիսոփայության, այսինքն՝ դիալեկտիկական մատերիալիզմի համար։ Վ. Ի. Լենինը հենց այդ էր ընդգծում, երբ

ասում էր, թե այդ կապի անտեսումը — ինչպես այդ անում էր Պլեխանովը — նշանակում է ծաղրել դիալեկտիկական մատերիալիզմի ոգին և այն զոհաբերել մետաֆիզիկային։

Ընդգծելով Էնգելսի այն դրույթը, թե «դարաշրջան կազմող յուրաքանչյուր հայտնագործության հետ զուգընթաց մինչև իսկ բնապատմական բնագավառում» (էլ չեմ խոսում մարդկության պատմության մասին) «մատերիալիզմն անխուսափելիորեն պետք է փոփոխի իր ձևը»[1], Վ. Ի. Լենինը պարզաբանում է, որ յուրաքանչյուր նոր հայտնագործություն բնագիտության մեջ — «ռևոլյուցիա ֆիզիկայի մեջ» — միայն հարստացնում է փիլիսոփայական մատերիալիզմը, ընդլայնում է նրա գործողության սահմանները, բարձրացնելով այն զարգացման մի նոր աստիճանի։

Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ մարքսիզմը, որպես գիտություն, չի կարող անտարբեր մնալ այն հսկայական փոփոխությունների, պրոգրեսի նկատմամբ, որ կատարել են բնական գիտությունները, մանավանդ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին։ Ընդսմին նա բազմիցս ընդգծում էր, որ իրեն հետաքրքրում են բացառապես հասարակական հայտնագործությունների մի քանի որոշակի դրույթներից արվող գնոսեոլոգիական եզրակացությունները։ Եվ զարմանալի չէ, որ նա իր առջև խնդիր դրեց «հստակորեն պատկերացնել», թե ո՛րն է բնագիտության ասպարեզում նորագույն հայտնագործություններից արվող գնոսեոլոգիական եզրակացությունների միջև եղած տարակարծության էությունը, ինչ հարաբերության մեջ են այդ տարակարծությունները փիլիսոփայության հիմնական գծերի հետ։

Ավելին, բնագիտության և ֆիզիկայի ճգնաժամի էությունը Լենինը տեսնում էր այն խորապես իդեալիստական, ագնոստիկական հետևությունների մեջ, որ անում էին ֆիզիկոսների մի մասը և ռեակցիոն փիլիսոփաները բնագիտության ասպարեզում կատարված նորագույն հայտնագործություններից։

Որպես նման ֆիզիկոսների տիպիկ ներկայացուցիչ, Լենինը վերցնում էր ֆրանսիացի ֆիզիկոս Հանրի Պուանկարեին, որը, այսպես կոչված, «էլեկտրադինամիկական» թեորիայի, այսինքն՝ ուժը առանց նյութի ընդունելու հիման վրա փորձում էր ապացուցել, թե վրա է հասել ֆիզիկայի օրենքների նկատմամբ «տարակուսանքների ժամանակաշրջանը», թե զանգվածը, մասսան չքանում է, խախտվում են մեխանիկայի հիմքերը, խախտվում է Նյուտոնի սկզբունքը, ներգործության և հակագործության հավասարությունը։ «Մեր առջև,— ասում է Պուանկարեն,— ֆիզիկայի հին սկզբունքների «փլատակներն են», այդ «սկզբունքների ընդհանուր ջախջախումը»։

Սրանք իդեալիստական եզրակացություններ են, ասում է Լենինը, որովհետև Պուանկարեն փորձում է ապացուցել, որ հին ֆիզիկայի ամենահիմնական սկզբունքների «խորտակումը» հանգեցնում է այն իդեային, թե «էլեկտրադինամիկական» ֆիզիկայի սկզբունքները «ո՛չ թե բնության ինչ-որ պատճենները, նկարներն են, ո՛չ թե մարդու գիտակցության վերաբերմամբ ինչ-որ արտաքին բաների կերպարանումներն են, այլ այդ գիտակցության արդյունքներն են»[2]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 334։
[2] Նույն տեղում, էջ 336։

Հեղինակի իմացաբանական եզրակացություններն այդ «տարակուսանքների ժամանակաշրջանից», հետևաբար, կայանում են նրանում, ասում էր Լենինը, ըստ նրա որ «ո՛չ թե բնությունն է տալիս (կամ մեր վզին փաթաթում) տարածության և ժամանակի հասկացությունները, այլ մենք ենք նրանց տալիս բնությանը». «այն ամենը, ինչը միտք չէ, զտագույն ոչինչ է»[1]։

Անելով այսպիսի, գնոսեոլոգիական եզրակացություններ ֆիզիկայի նորագույն հայտնագործություններից, ռեակցիոն փիլիսոփաները ձգտում են հիմնավորել ֆիդեիզմը, իռացիոնալիզմը, հակաինտելեկտուալիզմը։

Խոսելով դրական գիտության սահմանների և արժեքի մասին, ռեակցիոն փիլիսոփաներն ու փիլիսոփայող ֆիզիկոսները կասկածի տակ են առնում դրական գիտության օրինականությունը, օբյեկտն իմանալու հնարավորությունը։ Նրանք արդի ֆիզիկայի ճգնաժամից անում են սկեպտիկ եզրակացություններ, որ «գիտությունը ավելին չէ, քան սիմվոլական ֆորմուլա, նշման (նշանակման, repérage, նշանների, նիշերի, սիմվոլների ստեղծման) եղանակներ», որ գիտությունը, հետևաբար, կբախի է ենթարկվել, որ այդ պատճառով ֆիզիկան կորցնում է «իր ներկայացրած դրական գիտության ոգին, դառնում է կեղծ և վտանգավոր», որ, հետևաբար, «ռեալակսնի իմացությունը պետք է որոնել այլ միջոցներով... Պետք է այլ ուղիով գնալ, պետք է վերադարձնել սուբյեկտիվ ինտուիցիային, ռեալության միստիկական զգացմանը, մի խոսքով՝ խորհրդավորին այն, ինչ որ նրանից համարվում էր խլված գիտության կողմից»[2]։

Վ. Ի. Լենինը, տալով ֆիզիկայի ճգնաժամի էության խորը դիալեկտիկական-մատերիալիստական վերլուծությունը, ցույց տվեց, որ նախկին ֆիզիկայի կողմից տարերայնորեն ընդունվող իմացության մատերիալիստական թեորիան փոխարինվում էր իդեալիստական ու ագնոստիկական թեորիայով, մի բան, որից օգտվեց ֆիդեիզմը։ Այդ նշանակում էր, որ այսպես կոչված, նոր ֆիզիկայի բնագավառում առաջացած նոր հոսանքը, թեորիայի մեջ տեսնում էր միայն սիմվոլ, նշաններ, նշումներ պրակտիկայի համար, այսինքն՝ բացառում էր և շարունակում է բացառել մեր գիտակցությունից անկախ և նրա կողմից արտացոլվող օբյեկտիվ ռեալության գոյությունը։ «Արդի ֆիզիկայի ճգնաժամի էությունն այն է,— գրում էր Լենինը,— որ հին օրենքներն ու հիմնական սկզբունքները խորտակվում են, գիտակցությունից դուրս գտնվող օբյեկտիվ ռեալությունը մի կողմ է նետվում, այսինքն՝ մատերիալիզմը փոխարինվում է իդեալիզմով և ագնոստիցիզմով։ «Մատերիան չքացավ» — այսպես կարելի է արտահայտել բազմաթիվ մասնավոր հարցերի վերաբերմամբ հիմնական ու տիպական այն դժվարությունը, որ ստեղծեց այդ ճգնաժամը»[3]։

Ընդսմին Լենինը ապացուցեց, որ նորագույն հայտնագործություններից փիլիսոփայական իդեալիստների արած գնոսեոլոգիական եզրակացություններ-ը ուղղակի տանում են դեպի ֆիդեիզմը, հակա-ինտելեկտուալիզմը, Բերկլիի և Յումի ուսմունքը։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 336։

[2] Ջակերտներում Աբել Ռեյի խոսքերը բերվում են ըստ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության, Երկեր, հատ. 14, էջ 337—343.

[3] Նույն տեղում, էջ 343։

Նոր ֆիզիկան մոլորվել-ընկել է իդեալիզմի մեջ, ասում է Վ. Ի. Լենինը, գլխավորապես հենց այն պատճառով, որ ֆիզիկոսները դիալեկտիկա չգիտեին և պայքարում էին մետաֆիզիկական մատերիալիզմի դեմ՝ նրա «անփոփոխ», «հավիտենական» սկզբունքներով, մատերիայի անփոփոխ հատկություններով հանդերձ։ Նրանց սխալը հենց այն էր, որ նրանք անտեսում էին մատերիայի միակ «հատկությունը», որի ճանաչման հետ էր կապված փիլիսոփայական մատերիալիզմը, այն է՝ օբյեկտիվ ռեալություն լինելու, մեր գիտակցությունից դուրս գոյություն ունենալու հատկությունը։

Նոր ֆիզիկայի կողմնակիցներից շատերը, ասում էր Լենինը, չէին հասկացել, որ դիալեկտիկական մատերիալիզմը կանգնած է մատերիայի կառուցվածքի ու նրա հատկությունների վերաբերյալ ամեն մի գիտական դրույթի մոտավոր, հարաբերական բնույթի, բնության մեջ բացարձակ սահմանների բացակայության, շարժվող մատերիայի՝ մի վիճակից մի այլ վիճակի փոխարկվելու տեսակետի վրա։ Գիտության բոլոր արդի նվաճումները, ֆիզիկայի նորագույն հայտնագործությունները, մատերիայի փոխարկման բոլոր ձևերը դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական սկզբունքների լոկ նոր հաստատումն են։

«Որքան էլ խորշեն մատերիալիզմից թե՛ Ռեյն ու այն ֆիզիկոսները... ասում էր Լենինը,— այնուամենայնիվ անտարակուսելի է մնում, որ մեխանիկան դանդաղ ռեալ շարժումների արտանկարն է, իսկ նոր ֆիզիկան արտանկարն է վիթխարիորեն արագ ռեալ շարժումների»[1]։

Այսպիսով, Լենինը անհերքելիորեն ապացուցեց, որ նոր ֆիզիկայից արվող իդեալիստական եզրակացությունները առաջանում են ոչ թե նրանից, որ բացահայտվում են նյութի և ուժի, մատերիայի և շարժման նոր տեսակներ, այլ նրանից, որ փորձ է արվում շարժումը պատկերացնել առանց մատերայի։ Իմացաբանական տեսակետից այդ նշանակում էր, որ իդեալիստները նոր ֆիզիկայից պահանջում էին ապացուցել, թե ընդհանուրը գոյություն ունի առանց մասնակիի, ոգին՝ առանց մատերիայի, ուժը՝ առանց նյութի, գիտությունը՝ առանց փորձի կամ մատերիայի, բացարձակը՝ առանց հարաբերականի։

Որոշ ֆիզիկոսների դժբախտությունը, խորը սխալն այն էր, գրում էր Վ. Ի. Լենինը, որ «բացասելով մատերայի մինչ այդ հայտնի տարրերի և հատկությունների անփոփոխությունը՝ նրանք գլորվում էին մինչև մատերիայի, այսինքն՝ ֆիզիկական աշխարհի օբյեկտիվ ռեալության ժխտումը։ Ժխտելով կարևորագույն և հիմնական օրենքների բացարձակ բնույթը, նրանք գլորվում էին մինչև այնտեղ, որ ժխտում էին բնության մեջ ամեն մի օբյեկտիվ օրինաչափություն, բնության օրենքը հայտարարելով հասարակ պայմանականություն... Պնդելով, որ մեր գիտելիքներն ունեն մոտավոր, հարաբերական բնույթ, նրանք գլորվում էին մինչև այնտեղ, որ ժխտում էին իմացությունից անկախ օբյեկտը, որ մոտավորապես ճիշտ, հարաբերաբար ճիշտ կերպով արտացոլվում է այդ իմացության կողմից։ Եվ այլն, և այլն անվերջ»[2]։

Շարժումն առանց մատերիայի ընդունելն իրականում նշանակում էր ընդունել մտածողությունը առանց ուղեղի, ընդունել մտքի գոյությունը մատերիայի չքացումից հետո։ Հենց դա էլ փիլիսոփայական իդեալիզմ է, որը որ-

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 14, էջ 353։
[2] Նույն տեղում, էջ 348—349։

պես հիմք է ընդունում զուտ միտքը, բացարձակ իդեան, ունիվերսալ կամքը կամ զգայությունը։

Գնոսեոլոգիական այդ եզրակացության անհեթեթությունը հանգեցնում է սոլիպսիզմի։

Հակառակ Բոգդանովի, Բազարովի, Յուշկևիչի և այլոց բոլոր խուսափանքներին, նրանք ևս շատ հարցերում սերտորեն հարում էին «ֆիզիկական» իդեալիզմի, սոլիպսիզմի դիրքերին։ Գնալով Օսվալդի հետքերով, Բոգդանովը, օրինակ, պնդում է, թե «կարելի է շարժումը պատկերացնել առանց մատերիայի»։

Իսկ Յուշկևիչը, կուրորեն հնազանդվելով «մատերիալիստ» Ավենարիուսի հեղինակությանը, պնդում էր, թե երկնային մարմինները, այդ թվում և երկիրը, մարդկային իմացության սիմվոլն են, թե «էներգիան՝ գա կոնստանցիա է, էմպիրիոսիմվոլ, ինչպես և մյուս էմպիրիսիմվոլները, որոնք առժամանակ բավարարում են տվյալի իռացիոնալ հոսանքի մեջ բանականություն, լոգոս մտցնելու մարդկային հիմնական պահանջին»[1]։ Իր եզրակացությունների մեջ, ասում է Վ. Ի. Լենինը, Յուշկևիչն այնքան է խրվել ֆիդեիզմի մեջ, որ պնդում է, թե մեր գիտելիքները, թեորիաները ոչ թե օբյեկտիվ ռեալության, մատերիայի շարժման ու փոփոխության արտացոլումն են, այլ «զուտ սիմվոլներ են»։

Այս կապակցությամբ Լենինը հատկապես ծառանում է այն փիլիսոփաների և ֆիզիկոսների դեմ, որոնք գիտության և նրա կողմից հայտնաբերած օրենքները համարում էին «հարմար ֆիկցիա» (удобная фикция) կամ, «մաքուր սիմվոլ»։

Հարցն այն է, թե ինչն է կազմում մեր թեորիաների հիմքը. արդյոք մեր թեորիաները, գիտելիքները, պատկերացումները օբյեկտիվ աշխարհի ճշգրիտ նկարահանումն են, թե լոկ «հարմար ֆիկցիա», արդյոք օբյեկտիվ ռեալության, շարժվող մատերիայի «պատճենն» են, թե միայն «մեթոդոլոգիա», «զուտ սիմվոլ», «փորձի կազմակերպման ձև», թեորիայի նկարագրությունները ռեալ բովանդակություն ունեն, թե ոչ, մեր դիտելիքները ստույգ են, օբյեկտիվ ճշմարտության նշանակություն ունեն, թե մեր սուբյեկտիվ ապրումները, զգայություններն են և այլն։

«Հարմար ֆիկցիայի տեսակետից,— ասում էր Լենինը,— թեորիան կլինի «հիշողության հեշտացումը», մեր դիտողությունների մեջ «կարգ մտցնելը», նրանց համաձայնեցումը որոշ արհեստական համակարգության հետ, «մեր գիտելիքների կարգավորումը», նրա հանգեցումը հավասարումների և այլն»[2]։

«Հարմար ֆիկցիայի» թեորիայի կողմնակիցները,— ասում էր Լենինը,— ժխտում են մեր գիտելիքների, թեորիայի ռեալ բովանդակությունը, ժխտում են մոլեկուլի, ատոմի ռեալ, օբյեկտիվ գոյությունը, դրանք հայտարարում են ֆիկցիա, մեր ապրումները, զգայությունները կարգավորելու սոսկ հարմար ձև։

Քանի որ մոլեկուլներն ու ատոմները չի կարելի տեսնել, ասում են այդ թեորիաների կողմնակիցները, ապա դրանք չի կարելի դիտել որպես ռեալություններ։

Հենվելով ժամանակակից գիտության նվաճումների, հասարակական

---

[1] *П. Юшкевич*, Современная энергетика, сборник „Очерки по философии марксизма", 1908, стр. 209.

[2] Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 14, էջ 366։

պրակտիկայի վրա, Լենինը ցույց է տալիս «հարմար ֆիկցիայի» մոդայական թեորիայի հակագիտական և ֆիդեիստական բնույթը։

Գիտական տվյալների ամբողջությունը ատոմների և մոլեկուլների գոյության նկատմամբ՝ տարակուսանքի տեղ չի թողնում,— ասում է Վ. Ի. Լենինը։

Մարքսիզմ-լենինիզմը պնդում է, որ ատոմներն ու մոլեկուլները մատերիայի վերջին մասնիկները, նրա բաժանելիության վերջին սահմանը չեն։ Որքան ավելի է կատարելագործվում ու խորանում մարդկանց պատկերացումը արտաքին աշխարհի ներքին կառուցվածքի մասին, որքան ավելի է խորանում մարդկանց պատկերացումը ատոմի ու մոլեկուլի կառուցվածքի մասին, այնքան ավելի կատարյալ է այն և ավելի ճիշտ է արտացոլում ռեալությունները։ Հենց այդ իմաստով ատոմները ո՛չ թե օժանդակ հասկացողություններ են, ինչպես ենթադրում են ֆիզիկական իդեալիստները, այլ ֆիզիկական ռեալություններ։

Վ. Ի. Լենինը, մատերիալիստական գնոսեոլոգիական հետևություններ անելով ֆիզիկայի նորագույն հայտնագործություններից, պնդում էր, որ «ֆիզիկայի թեորիան օբյեկտիվ ռեալության (ավելի ու ավելի ճշգրիտ) նկարահանումն է։ Աշխարհը շարժվող մատերիա է, որը մենք ավելի ու ավելի խորն ենք իմանում»[1]։

Մերկացնելով «ֆիզիկական» իդեալիստների ռեակցիոն էությունը, որոնք բացառում էին ատոմների, մոլեկուլների ռեալ ֆիզիկական գոյությունը, դրանք հայտարարում էին որպես սոսկ «օժանդակ հասկացություն», «հարմար ֆիկցիա», Լենինը նրանց անվանում է սիմվոլիստներ, սպիրիտուալիստներ, որոնք գիտության նվաճումներից արված իրենց գնոսեոլոգիական եզրակացություններով փորձում են հիմնավորել, օրինականացնել աստվածաբանների ու ռեակցիոն պրոֆեսորների հոսմագործակցությունը «առաջավոր» կապիտալիստական երկրներում։

Սպիրիտուալիստ Ուորդը, ասում էր Լենինը, հենց գիտությունը կրոնին հենթարկելու համար աղավաղում է ֆիզիկայի բնագավառում կատարված նոր բագույն հայտնագործություններից բխող գնոսեոլոգիական եզրակացությունները, որովհետև «մենք, ասում էր Ուորդը, երբեք չենք հասնի աստծուն սոսկ մեխանիզմի միջոցով»[2]։

Հենց գիտությունն ու կրոնը հաշտեցնելու, հենց գիտությունը միստիֆիկացիայի ենթարկելու համար սպիրիտուալիստները շարժումը կտրում են մատերիայից, խոսում են «զուտ» շարժման մասին։ «Մենք որոշակի ոչինչ չենք գտնում, բացի շարժումից... Նույնիսկ բուն զանգվածն էլ, ինչպես ենթադրում են, վերջիվերջո դուրս է գալիս շարժման մի տեսակ — այնպիսի մի բանի շարժման, որ ո՛չ պինդ մարմին է, ո՛չ հեղուկ, ո՛չ էլ գազ,— ինքը մարմին չէ և ո՛չ էլ մարմինների ագրեգատ,— ֆենոմենալ չէ և չպետք է լինի նումենալ,— մի իսկական apeiron (հունական փիլիսոփայական տերմին է = անվերջ, անսահման), որի վերաբերմամբ մենք կիրառել կարող ենք մեր սեփական բնութագրությունները»[3]։

Այս օրինակով Վ. Ի. Լենինը լիակատար պարզությամբ ցույց է տալիս, թե

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 368—369։

[2] Ցիտատը Ուորդի գրքից բերվում է ըստ Վ. Ի. Լենինի. Երկեր, հատ. 14, էջ 376։

[3] Ուորդի խոսքերը բերվում են ըստ Վ. Ի. Լենինի, Երկեր, հատ. 14, էջ 374։

ուր էին նայում սիմվոլների, «հարմար ֆիկցիայի», «օժանդակ հասկացությունների» թեորիայի կողմնակիցները։

Մերկացնելով այդ ֆիզիկական թեորիաները, Լենինը ցույց տվեց, որ մեր իմացությունը ոչ թե «նիշ», «նշան» կամ «սիմվոլ» է, այլ օբյեկտիվ ռեալ աշխարհի, արտաքին աշխարհում տեղի ունեցող պատճառաբանորեն-կապակցված պրոցեսների արտացոլումը։ «Իրերի «էությունը» կամ «սուբստանցը» նույնպես հարաբերական են. նրանք օբյեկտների մարդկային իմացության խորացումն են միայն արտահայտում, և եթե երեկ այդ խորացումը չէր գնում ատոմից այն կողմը, այսօր — էլեկտրոնից և եթերից այն կողմը, ապա դիալեկտիկական մատերիալիզմը պնդում է, որ ժամանակավոր, հարաբերական մոտավոր բնույթ ունեն մարդկային պրոգրեսիվ գիտության կողմից բնությունն իմանալու այդ բոլոր նշանաձողերը (Вехи)։ Էլեկտրոնը նույնպես անսպառելի է, ինչպես և ատոմը, բնությունն անվերջ է, բայց նա անվերջորեն գոյություն ունի, և ահա մարդու գիտակցությունից և զգայությունից դուրս նրա գոյության՝ հենց այս միակ կատեգորիկ, միակ անպայման ճանաչումն է, որ տարբերում է դիալեկտիկական մատերիալիզմը ռելյատիվիստական ագնոստիցիզմից և իդեալիզմից»[1]։

Իդեալիստները ձգտում են դուրս շպրտել փիլիսոփայական մատերիալիզմը բնագիտության, հատկապես նորագույն ֆիզիկայի բնագավառից, տեղ հարթելով բացահայտ ֆիդեիզմին։ Նրանք չեն ուզում տեսնել, որ ֆիզիկայի ասպարեզում կատարված ռևոլյուցիան, մեխանիկական ֆիզիկայի սահմանափակ բնույթի բացահայտումը չի կարող փիլիսոփայական մատերիալիզմի կործանման հիմք ծառայել, այլ, ընդհակառակը, է՛լ ավելի է հաստատում շարժվող բնության, մատերիայի, մեր իմացության զարգացման դիալեկտիկական բնույթը։

«Ատոմի քայքայելիությունը, նրա անսպառելիությունը, մատերիայի բոլոր ձևերի և նրա շարժման փոփոխականությունը, գրում է Լենինը, միշտ եղել են դիալեկտիկական մատերիալիզմի հենարանը։ Բնության մեջ բոլոր սահմանները պայմանական են, հարաբերական, շարժուն, արտահայտում են մեր մտքի մերձավորումը մատերիայի իմացությանը,— բայց դա ամենևին չի ապացուցում, թե բնությունը, մատերիան ինքը սիմվոլ է, պայմանական նշան է, այսինքն՝ մեր մտքի արդյունքը... Մարդկային միտքը շատ արտասովոր բաներ է հայտնագործել բնության մեջ և է՛լ ավելի կհայտնագործի, դրանով իր իշխանությունը մեծացնելով նրա վերաբերմամբ, բայց դա չի նշանակում, թե բնությունը մեր մտքի կամ արստրակտ մտքի, այսինքն՝ ուորդյան աստծու, յոդղանովյան «ընդարկման» և այլն ստեղծագործությունն է»[2]։

Բնագիտության մեջ կատարված նորագույն հայտնագործություններից իդեալիստական գնոսեոլոգիական եզրակացություններ էին անում նաև գերմանական նեոկանտականները՝ ի դեմս Ալբերտ Լանգեի, Գերման Կոհենի, Էդվարդ ֆոն-Հարտմանի և ուրիշների։ Նրանք հրճվանքով պնդում էին, որ նյութի քիմիական պրոբլեմների մեջ խորանալը կհանգեցնի մատերիալիստական փիլիսոփայության հաղթահարմանը, որ «ատոմիզմը պետք է իր տեղը զիջեր դինամիզմին», այսինքն՝ շարժմանը առանց մատերիայի, և որ, իբր թե

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 349։

[2] Նույն տեղում, էջ 375—376։

«Թեորիական իդեալիզմը սկսել է սասանել բնագետների մատերիալիզմը»[1], որ, վերջապես, մատերիան ուժի փոխարկող էլեկտրականության թեորիան կհասցնի իդեալիզմի հաղթանակին և այլն, և այլն։

Վ. Ի. Լենինը այդ փիլիսոփայության ներկայացուցիչներին անվանում է «ոգնտեսներ», ֆիդեիզմի նորագույն պաշտպաններ, որոնք շարժումը մեկնաբանում են որպես ոչ-մատերիական, որպես հոգևոր, միստիկական հոգեկան պրոցես, բացահայտորեն պաշտպանում են ագնոստիցիզմը, խարում են «փիլիսոփայորեն անկիրթ մարդկանց», առաջարկում են «մտածել» շարժումը առանց մատերիայի։

Արդի բնագիտությունից իդեալիստական գնոսեոլոգիական եզրակացություններ անելու մեջ առանձնապես հմտանում էր, ինչպես Լենինն էր ասում, «իսկական գերմանական սեհարյուրյակային» էդվարդ Ֆոն-Հարտմանը։ Պաշտպանելով «դինամիզմը», այսինքն՝ ուժի ընդունումն առանց մատերիայի, Հարտմանը դրանից եզրակացնում է, որ «բնության օրենքները համաշխարհային միտք են»։ Հարտմանը, ասում էր Լենինը, պահանջում էր արմատականորեն վերակառուցել ժամանակի, տարածության, պատճառականության և բնության օրենքների օբյեկտիվ ռեալության ուսմունքը։ Հարտմանը, ատոմներն ու մոլեկուլները հայտարարելով սիմվոլներ կամ աշխատանքային հիպոթեզներ, պահանջում էր ունիվերսալ կերպով հոգեկանը դարձնել ամբողջ ֆիզիկական աշխարհի հիմքը։

Վ. Ի. Լենինը ժևրկացնում է նաև ֆրանսիական ռեակցիոներ-կղերականներին, որոնք փորձում էին օգտագործել ագնոստիկական, մախիստական ֆիզիկան՝ աստծու գոյությունն ապացուցելու համար։ «Գիտության ճշմարտությունները,— ասում է կղերական փիլիսոփա Լեռուան,— պայմանական նշաններ, սիմվոլներ են», ուստի օբյեկտիվ ռեալությունը անճանաչելի է, ընդորում կրոնը պակաս իրական նշանակություն չունի, քան գիտությունը։

Սիմվոլիստական ֆիզիկայի օբյեկտիվ ճշմարտությունների ժխտումը,— ասում է Լեռուան,— բավականաչափ հիմք է տալիս ճանաչելու կրոնի սուբյեկտիվ ճշմարտությունը գիտության սուբյեկտիվ (մարդկությունից զատ գոյություն չունեցող) ճշմարտության կողքին։

Կասկածից դուրս է, որ Լեռուան սահմանափակում է գիտական իմացության սահմանները, որպեսզի ավելի մեծ տեղ հատկացնի իմացության մյուս աղբյուրներին՝ սրտին, զգացմունքին, բնազդին, հավատին։

Կղերական մտածող Լեռուայի հետ սկզբունքորեն չէր տարաձայնում նորագույն էմպիրիոսիմվոլիզմի հիմնադիր մախիստ Պուանկարեն. «Այն ամենը, ինչ որ միտք չէ, զուտ ոչինչ է. որովհետև մենք չենք կարող մտածել ոչինչ, բացի մտքից»[2], ասում է նա։

Իսկ բացահայտ իդեալիստ Ժորժ Սորելը ասում էր, թե աշխարհը իմանալու փորձը սոսկ պատրանք է և չպետք է դնել այն հարցը, թե գիտությունը կարող է արդյոք իմանալ աշխարհը։

Մերկացնելով գիտության և գիտական իմացության վերաբերյալ այդ ագնոստիկական և բացահայտ կղերական հայացքները, Լենինը տալիս է գի-

---

[1] Կոհենի խոսքերը բերվում են ըստ Վ. Ի. Լենինի. Երկեր, հատ. 14, էջ 376։

[2] Լեռուայի և Պուանկարեի խոսքերը բերվում են ըստ Վ. Ի. Լենինի. Երկեր. հատ. 14, էջ 389—390։

տական իմացության մեջ աշխարհի և նրա օրինաչափությունների արտացոլման մատերիալիստական-դիալեկտիկական ըմբռնումը։ «Մատերիալիզմի հիմնական դիծը հենց այն է,— գրում էր Լենինը,— որ նա ելնում է գիտության օբյեկտիվությունից, գիտության կողմից արտացոլվող օբյեկտիվ ռեալության ճանաչումից, մինչդեռ իդեալիզմը կարիք ունի «շրջանցիկ ուղիների», որպեսզի այս կամ այն կերպ օբյեկտիվությունը «մակաբերի» ոգուց, գիտակցությունից, «հոգեկանից»[1]։

Պոզիտիվիզմի և ֆենոմենալիզմի հիանալի օրինակ Ա. Ռեյը, ասում էր Վ. Ի. Լենինը, հենց փորձում է սվաղել մատերիալիզմի և իդեալիզմի այդ հակադրությունը և այդպիսով մախիստական խախուտ ֆիզիկան՝ դրանից բխող իդեալիստական բոլոր հետևություններով, ներկայացնել որպես գիտական «մատերիալիստական թեորիա»։

Մերկացնելով նորագույն ֆիզիկայից արված իդեալիստական եզրակացությունների հակագիտական բնույթը, և նոր ֆիզիկայի մեջ գոյություն ունեցող մատերիալիստական ու իդեալիստական դպրոցների հակադրությունները «հաշտեցնելու» Ռեյի փորձերը, Վ. Ի. Լենինը հենվում էր առավել հետևողական մատերիալիստ-ֆիզիկոսների վրա, որոնք մատերիալիզմը պաշտպանում էին ֆիդեիզմից, անում էին մատերիալիստական գնոսեոլոգիական եզրակացություններ արդի ֆիզիկայի նորագույն հայտնագործություններից, ժխտում էին իդեալիզմը։ Այդպիսին էր, օրինակ, ֆրանսիացի ֆիզիկոս Ալֆրեդ Կորնյուն, որը արհամարհանքով դիմավորեց իդեալիստական և մասնավորապես օստվալդյան «գիտական մատերիալիզմի կործանումը»։ Ֆիզիկոսների 1900 թվականի Փարիզի Միջազգային կոնգրեսում ունեցած իր ելույթում Կորնյուն հայտարարեց. «...Որքան ավելի ենք իմանում մենք բնության երևույթները, այնքան ավելի է զարգանում և ավելի ճշգրիտ դառնում կարտեզիանական համարձակ հայացքը աշխարհի մեխանիզմի վերաբերմամբ. ֆիզիկական աշխարհում ոչինչ չկա, բացի մատերիայից և շարժումից»[2]։ «Աշխարհի մեխանիզմը», նրա օրինաչափությունները լիովին իմանալի են, իսկ մեր իմացությունը մատերիայի ու շարժման մասին՝ ստույգ է և ունի օբյեկտիվ ճշմարտության բնույթ։

Ֆիզիկոս իդեալիստներին հակադրվում են գերմանական բնագետները, տարերային մատերիալիստներ Հերցը, Բոլցմանը, Էրիխ Ռեխերը և ուրիշները, որոնք, չիմանալով դիալեկտիկան, պաշտպանում էին մատերիալիստական ֆիզիկան և ի հակադրություն իդեալիստների, պնդում էին, թե տարակույս չի կարող լինել, որ աշխարհի պատկերը այն բանի պատկերն է, «թե ինչպես հայտնի կանոններով ժամանակի մեջ կփոփոխվեն հսկայական քանակությամբ իրեր, որոնք դասավորված են երեք չափումն ունեցող տարածության մեջ»[3]։

Ֆրանսիացի հայտնի ֆիզիկոս, մատերիալիստ Լանժեվենը, նույնպես մերկացնում էր ֆիզիկոս-իդեալիստներին և պաշտպանում պատճառականության ու օրինաչափության մարքս-լենինյան թեորիան։

Արդի ֆիզիկայի, մասնավորապես ատոմային ֆիզիկայի նվաճումների

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 394։
[2] Ա. Կորնյուի ցիտատը բերվում է ըստ Վ. Ի. Լենինի, Երկեր, հատ. 14, էջ 397։
[3] Բոլցմանի ցիտատը բերվում է ըստ Վ. Ի. Լենինի, Երկեր, հատ. 14, էջ 385։

հիման վրա Լանժեվենը ցույց էր տալիս, որ ինչպես այդ, այնպես էլ մյուս բոլոր ճյուղերում ֆիզիկան գործ ունի բնության ռեալ, օբյեկտիվ երևույթների հետ, որ ատոմի ֆիզիկան բացահայտում է այն առանձնահատուկ օրինաչափությունները, որ հատուկ են ռեալ կերպով գոյություն ունեցող ատոմներին, սրանց շարժման մեջ ֆիզիկոսները հայտնադործում են ոչ թե իրենց զգայությունները, այլ օբյեկտիվ օրինաչափությունները։ Ավելին, Լանժեվենը ատոմային միջուկի բնագավառում գիտության ձեռք բերած նվաճումների վերլուծության հիման վրա պնդում էր, որ նյութի մեր իմացության ճանապարհին ոչ մի անհաղթահարելի սահման չկա, որ խորապես մոլորվում են նաև նրանք, ովքեր պնդում են, թե իբր «ատոմային բնագավառը ռեալության մի կտրոն է, որտեղ օբյեկտիվ պատճառականության օրենքները կորցնում են իրենց կիրառելիությունը և որտեղ դեպքերի ընթացքը ոչ մի դիտերմինացման չի ենթարկվում» [1]։

Քառասուն տարի առաջ,— գրում է Լանժեվենը,— խոսում էին «ատոմիզմի ճգնաժամի» մասին, պաշտպանում էին «հարմար ֆիկցիայի» թեորիան, բայց ֆիզիկական հետազոտության զարգացումը ապացուցեց ատոմի ռեալությունը։ Այսօր խոսում են «դետերմինիզմի ճգնաժամի» մասին, մինչդեռ ֆիզիկայի նվաճումները լիովին հաստատում են փաստերի օբյեկտիվությունն ու դետերմինացվածությունը։

«Նրանք, ովքեր ջանում են դետերմինիզմի հետ իմացության էվոլյուցիան պատկերել որպես պատճառականության սնանկություն, իզուր են վկայակոչում արդի գիտության նորագույն նվաճումները։ Նրանց իդեաները բնավ էլ այստեղից չեն վերցրած. դրանք վերցված են գիտական իմացությանը թշնամի հին փիլիսոփայությունից» [2]։

Վ. Ի. Լենինը հենվելով դիտության նորագույն նվաճումների վրա՝ իդեալիզմը մերկացնող առաջավոր դիտնականների մատերիալիստական թեորիաների վրա, լիովին մերկացրեց ֆիզիկական իդեալիստներին, որոնք փորձում էին կառչել ֆիզիկայի նոր հայտնագործություններից՝ ֆիդեիզմը հիմնավորելու համար։

Լենինը փիլիսոփայական մատերիալիզմը պաշտպանեց փիլիսոփայական իդեալիզմից, այն բարձրացրեց նոր աստիճանի, ընդհանրացրեց XIX դարի վերջի և XX դարի սկզբի բնագիտության բոլոր նվաճումները և խորտակիչ հարված հասցրեց ագնոստիցիզմին, սկեպտիցիզմին, իդեալիստական ամբողջ փիլիսոփայությանը, դրանով նա ստեղծեց լայն ասպարեզ գիտությունների առաջընթաց զարգացման համար։ Դրա փայլուն օրինակն է սովետական գիտությունը, որը ղեկավարվում է Լենինի գաղափարներով։

Դրա փայլուն օրինակն է նաև արտասահմանի առաջավոր գիտնականների բազմաթիվ խոստովանություններն այդ մասին։ Այսպես, օրինակ՝ անգլիական խոշորագույն ռևոլյուցիոներ գիտնական և հասարակական-քաղաքական գործիչ Ջոն Դեսմոնտ Բեռնալն իր «Գիտություն և հասարակություն» տաղանդավոր աշխատության մեջ՝ խոսելով լենինիզմի նշանակության մասին գիտության զարգացման համար, ասում է. «Լենինը մեզ համար ոդեշնչող օրինակ է։ Մենք ապրում ու գործում ենք նրա իդեաների անմիջական ազդեցության տակ»։

---

[1] *П. Ланжевен*. Избранные произведения, М., 1949, стр. 386.
[2] Там же.

Լենինի ուսմունքի մոբիլիզացնող, կազմակերպող, աշխարհն ընդգրկող ուժն այն է, ասում է ԱՄՆ-ի Կոմպարտիայի նախագահ Ուլյամս Ֆոստերը, որ նա պրոլետարիատին, աշխարհի բոլոր առաջավոր ուժերին, զինում է «Սոցիալական անալիզի դիտական մեթոդով, որը կանգնած է անհամեմատ բարձր աստիճանի վրա, քան կապիտալիզմի իդեոլոգների պրիմիտիվ էմպիրիկ մեթոդները»։

Ֆրանսիական փիլիսոփա, քաղաքական գործիչ Ռոժե Գարոդին իր «Ազատության բառարանը» աշխատության մեջ, խոսելով Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության նշանակության մասին, ասում է, որ այդ աշխատությունը ուժեղ զենք է մեր ձեռքին՝ արդի իդեալիզմի, ֆիդեիզմի դեմ մղած պայքարում։ Այդ դիրքը,— ասում է նա,— մեր բոլոր հետազոտությունների ընթացքում զինում է մեզ գիտական մեթոդով և մարտնչող մատերիալիստական աշխարհայացքով։

* * *

Իմպերիալիզմի դարաշրջանում արտադրության կապիտալիստական եղանակի նեխման ու քայքայման խորացման զուգընթաց, խորանում և ընդլայնվում է գիտության ճգնաժամը։ Գիտության նվաճումները գնալով ավելի են միստիֆիկացիայի ենթարկվում, աղավաղվում և դրվում ի սպաս ֆիդեիզմին։

«Հարմար ֆիկցիայի» ռեակցիոն թեորիան, որի հակագիտական էությունը մերկացրեց Վ. Ի. Լենինը, կազմում է ժամանակակից ռեակցիոն ֆիզիկական թեորիաների հիմքը։

«Թեև մեր դարում,— ասում է Մարվին Ֆարրերը,— մանրադիտակային ֆիզիկայի, էլեկտրոնային մանրադիտակի և ռենտգենագրաֆիայի դարում այնքան էլ հեշտ չէ ատոմները համարել ֆիկցիա, այսուամենայնիվ գիտության մեջ կա ռեակցիոներների մի ամբողջ ոհմակ, որոնք այժմ ըստ ամենայնի պրոպագանդում են այն հակագիտական չնչին իդեան, թե պարզ ֆիկցիան նույնիսկ ավելի հիմք է ծառայում գիտությունների համար, քան ռեալ փորձի տվյալները»։

Գիտության ասպարեզի ռեակցիոներները այժմ դիտավորյալ կերպով կեղծում են ամբողջ գիտության նվաճումները, սքողում են նրանից բխող բոլոր ռևոլյուցիոն եզրակացությունները, ամորձատում են գիտությունը ի հաճույս ֆիդեիստների, ի հաճույս եկեղեցու։ Հայտնի է, որ Դիցդենն իր ժամանակին այդպիսի ռեակցիոներներին անվանել է «բուրժուազիայի դիպլոմավոր լաքեյներ»։

«Բավական է,— ասում է Լենինը, —որևէ չափով խորհել ժամանակակից մարդկանց պետական, ապա ընդհանուր-տնտեսական, ապա կենցաղային և ամեն տեսակ այլ կոխման մասին իշխող բուրժուազիայից՝ հասկանալու համար Դիցգենի կտրուկ բնորոշման բացարձակ ճշտությունը։ Բավական է մտաբերել մոդա դարձած ահագին թվով փիլիսոփայական ուղղությունները, որոնք այնպես հաճախ առաջ են գալիս եվրոպական երկրներում, սկսած թեկուզ այն ուղղություններից, որոնք կապված էին ռադիումի գյուտի հետ, և վերջացրած նրանցով, որոնք այժմ ձգտում են կառչել էյնշտեյնին,— պատկերացնելու

համար բուրժուազիայի դասակարգային շահերի և դասակարգային դիրքի միջև եղած կապը, նրա կողմից կրոնի բոլոր ձևերը պաշտպանելու և մոդայական փիլիսոփայական ուղղությունների իդեական բովանդակության միջև եղած կապը»[1]։

Վ. Ի. Լենինը դրանով լիովին բացահայտում է ամբողջ ժամանակակից բուրժուական գիտության ճգնաժամի դասակարգային արմատները։

Արդի բուրժուական գիտնականներից մեկը՝ Ջոն Իլեֆ Բուդինը, որին նույնիսկ չի կարելի դասել պրոգրեսիվ գիտնականների շարքը, իր «Բնությունը և բանականությունը» աշխատության մեջ, որ զետեղված է «Ամերիկյան փիլիսոփայություն» ժողովածուում, հատկապես ընդգծում է հարցի այդ կողմը։ «Ժամանակակից բուրժուական գիտությունը,— ասում է նա,— դա դիտության ու մաթեմատիկայի փայլուն շերտով ծածկված մի դամբարան է, բայց ներսում գտնվում են անցյալի անկենդան ոսկորները, իսկ ոգին լքում է նրան»։ Բուդինը վկայում է, որ այդ բանը ամենից ավելի երևան է գալիս ժամանակակից բուրժուական ակադեմիական փիլիսոփայության մեջ։ Գիտության փրկությունը նա տեսնում է կապիտալիստների սեղանի մոտ սողացող գիտնականների հրաժարականի մեջ։ «Բայց քանի որ ակադեմիական փիլիսոփայության գլխավոր նպատակը փիլիսոփայության պրոֆեսորների գոյության միջոցների ապահովումն է, հազիվ թե հարկ կա հույս դնել այդպիսի հրաժարման վրա»։

Բուդինը հասկանում է, որ քանի դեռ բուրժուական փիլիսոփայությունն ու գիտությունը զարգացնում են ակադեմիստ փիլիսոփա-գիտնականները, այսինքն՝ մոնոպոլիստական կապիտալիզմի գիտնական լաքեյները, քանի դեռ փիլիսոփայության բնագավառում իշխում է սոփեստաբանությամբ փչացած ուսմունքը, չի կարելի մտածել գիտության ու փիլիսոփայության իսկական զարգացման մասին։

Բուրժուական փիլիսոփայության դեգրեդացիայի մասին խոսում են նույնիսկ ժամանակակից ամենառեակցիոն փիլիսոփաները, ինչպես, օրինակ՝ Դյուին, Ռասսելը, Մարինո Լուին և ուրիշները։ Բայց նրանք դրա պատճառը համարում են ոչ թե կապիտալիզմի նեխումը իմպերիալիզմի էպոխայում, այլ «ժամանակակից մարդկանց փչացած ճաշակները», «կրթության մասսայական ձևը», «կոմունիստական թեորիաների բարգավաճումը» և այլն։ Անհեթեթություն։

Բուրժուական ամբողջ կուլտուրայի և փիլիսոփայության դեգրադացիայի փաստի ընդունումը, նման ռեակցիոներների կողմից, թեկուզ և այդպիսի խարդախումով, արտացոլում է օբյեկտիվ ճշմարտությունը, արտացոլում է կապիտալիստական ամբողջ հասարակության հոգևոր աշխարհի քայքայման պատկերը։

Եվ որքան բուրժուական հասարակության մեջ ավելի է խորանում գիտության ու ամբողջ կուլտուրայի ճգնաժամը, այնքան դրանք ավելի են դառնում փիլիսոփայական իդեալիզմի ստրուկը։ Բուրժուական գիտության ճգնաժամը դնալով ավելի է խորանում տերտերականության ճնշման տակ, հակաինտելեկտուալ փիլիսոփայական հոսանքների կործանարար ուժի ազդեցության տակ։

Ռեակցիոն գիտնականները նվիրված են կապիտալին,— ասում է Ֆրան-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 268։

սիլագի մատերիալիստ Ժորժ Կոնյոն իր «Քառասուն տարի Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի երևան գալու մոմենտից» հոդվածում,— աղճատում են գիտական հետազոտության հետևությունները, խուսափում են նոր փաստերը, գիտական նոր հայտնագործությունները խելացի կերպով մեկնաբանելուց, դավաճանում են գիտությանը՝ հօգուտ իդեալիզմի, միստիցիզմի, աբսկուրանտիզմի։ Այդ նպատակին հասնելու համար ռեակցիոն բնագետները ոչ միայն խեղաթյուրում են կոնկրետ հետազոտությունները, այլև կեղծում են բնագիտության զարգացման պատմությունը։ Այսպես, օրինակ, ռեակցիոն բնագիտության սյուներից մեկը՝ Վիկտոր Ֆ. Լենցենը «XX դարի փիլիսոփայությունը» ժողովածուի մեջ զետեղված իր «Գիտության փիլիսոփայությունը» հոդվածում պնդում է, որ «քսաներորդ դարի ֆիզիկական թեորիաները խթանեցին (ոգեշնչեցին) իդեալիզմի վերածնունդը»։ Ընդսմին նա շեշտը դնում է մախիստ Ֆիլիպ Ֆրանկի, էյնշտեյնի ագնոստիկական կոնցեպցիաների, էդդինգտոնի, Ջինսի սպիրիտուալիստական թեորիայի և այլ ռեակցիոն ֆիզիկական թեորիաների վրա։ Սոփեստաբանության, լեզվական խարդախումների միջոցով ռեակցիոներները ջանում են հարաբերականության թեորիան, կվանտային մեխանիկան, էլեկտրամագնիսային թեորիան, ժամանակակից ատոմիստական և գիտության այլ նվաճումները դարձնել իդեալիստական փիլիսոփայության հիմք։

Օրինակ, էդդինգտոնը ամենածայրահեղ իդեալիստական հետևություններ է անում միանգամայն գիտական կվանտային մեխանիկայի թեորիայից։ Նա պնդում է, որ մանրադիտակային ստրուկտուրաների համար դիտվող երևույթները կախված են դիտման մեթոդից։ Այդ հիման վրա նա առաջարկում է բոլոր ֆիզիկական օրենքները ապրիորի կերպով բխեցնել դիտման կոնստիտուցիայից։ Էդդինգտոնը փորձում է էքսպերիմենտալ ֆիզիկայի նվաճումները խեղաթյուրելու միջոցով այն ի սպաս դնել ֆիդեիզմին։ Նրա ամբողջ գիրքը, կարելի է ասել, նրա աշխատություններից ամենավերջինը՝ «Ֆիզիկայի փիլիսոփայությունը», նվիրված է իդեալիզմի պաշտպանությանը։

Միստիֆիկացիայի ենթարկելով ժամանակակից գիտության նվաճումները, նա փորձում է ժխտել նյութի դեռևս չդիտվող մասնիկների օբյեկտիվ բնույթը, այդ մասնիկները զրկել ռեալ բովանդակությունից, հաստատել ֆիզիկական իդեալիստների թեորիան այն մասին, թե մեր գիտելիքները սոսկ պայմանական նշաններ, սիմվոլներ են իրականության նկատմամբ, թե ինքը՝ իրականությունն անգիտելի է և անորոշ։

Իրականության անդիտելիության և անորոշության վերաբերյալ էդդինգտոնի բոլոր դատողությունները հանգում են այն բանի ապացուցմանը, թե ֆիզիկոսը կամ փորձարարը նկարագրում է սոսկ իր սուբյեկտիվ դիտողությունները, ընդորում այդ դիտողությունները ոչ մի ընդհանուր բան չունեն օբյեկտիվորեն գոյություն ունեցող նյութի բնույթի հետ, որ իբր նրանք գործ ունեն լոկ իրենց զգայությունների հետ։

Այդ հիման վրա էդդիդտոնն ու Ջինսը միանգամայն արհամարհում են իրերի ռեալ պրոցեսը, նրա բազմազանությունը, որն ապացուցվում է կվանտային մեխանիկայով, գիտության տվյալներով առհասարակ։

Այդ նույն ոգով նրանք քննում են պատճառականության ու օրինաչափության հարցը։ Էդդինգտոնը, օրինակ, գտնում է, որ «ֆիզիկական հիմնական օրենքների սիստեմը ինդետերմինիստական է»։ Այդ իմաստով նա մեր բոլոր

գիտելիքները համարում է հիպոթեզային, ժխտում է մեր գիտելիքների հավաստիությունը և նրանց օբյեկտիվ բնույթը։ Նա հենց այդպես էլ ասում է՝ «Ուսումնասիրելու համար ինձ տրամադրված միակ առարկան է իմ իմացության բովանդակությունը։ Համաձայն օբյեկտիվ նկարագրության, դա զգայությունների, էմոցիաների, հասկացությունների, հիշողությունների և այլն միատարր հավաքածու է»։

Ըստ էության, էդդինգտոնը կրկնում է մախիզմի կոնցեպցիաները, որոնք քննադատված են Լենինի կողմից։ Անկասկած է, որ էդդինգտոնը ունի միայն «նոր» փաստարկներ, իսկ եզրակացությունները հին են։

Քանի որ էդդինգտոնի համար ֆիզիկական տիեզերքը, բնությունը գոյություն չունեն և սոսկ անհատական գիտակցության արդյունք են, ապա, հետևաբար, նա պահանջում է, որ իմացությունը որպես իր առարկա ընտրի ոչ թե բնությունը, այլ մեր գիտակցությունը։ Գիտակցությունը պետք է ուսումնասիրվի ո՛չ թե մեր ուղեղի ֆիզիոլոգիական հիմունքները բացահայտելու, ո՛չ թե ուղեղի ստրուկտուրայի ֆիզիկա-քիմիական անալիզի միջոցով, այլ սոսկ «բարձր իմացության» միջոցով։ «Բանականության դարում,— ասում է նա,— հավատը, սակայն, բարձր է մնում այն պատճառով, որ բանականությունը հավատի մոմենտներից մեկն է»։ Ահա ինչու էին նրան հարկավոր այդ բոլոր սեթևեթանքները՝ «նոր ֆիզիկայի» կամ «անդիտելիության սկզբունքի» անվան տակ։

Իսկ Ջինսը գրել է մի գիրք, որը վերնագրել է «Խորհրդավոր տիեզերք», որտեղ նա առաջադրել է այն ֆորմուլան, թե տիեզերքը այժմ շատ ավելի հիշեցնում է «մեծ միտք, քան մեծ մեքենա»։ Կասկած չկա, որ էդդինգտոնն ու Ջինսը սպիրիտուալիստներ են։

Գիտության զարգացումն ու կատարելագործումը, ասում են նրանք, «ապացուցում են», թե գերբնական ուժերը ազդում են բնական դեպքերի վրա։ Էդդինգտոնը իր «Ֆիզիկական աշխարհի բնությունը» գրքում խոսում է «գիտության մեջ կրոնի «ընդունելիության» մասին։ Ավելին, Ջինսը և էդդինգտոնը աստծուն անվանում են «տիեզերքի Հարտարապետ»։ Բորդանը խոսում է մատերիալիզմի լիկվիդացիայի, կրոնի հաղթանակի մասին։ Շրեդինգերն իր «Ինչ է կյանքը ֆիզիկայի տեսակետից» գրքում «դեները» պատկերում է «անմահ հոգով» օժտված բարդ մոլեկուլի ձևով։ Շրեդինգերը այդ միստիկան հայտարարում է «...առավելը այն բանից, ինչ որ կարող է տալ բիոլոգը, որը փորձում է մեկ հարվածով ապացուցել թե աստծու գոյությունը, թե հոգու անմահությունը»։

Այդպիսի թեորիան հավասարեցնում է գիտությունն ու կրոնը։ Նա ձգտում է օրինականացնել իդեալիզմը գիտության մեջ, փորձում է հիմնավորել այն կեղծիքը, թե բնության հարցերին վերաբերող այս կամ այն լուծումը կարող է հիմնվել ոչ թե գիտության արդյունքների, այլ միայն ընդհանուր խորհրդածությունների «զուտ» իմացության վրա, հավատի վրա։

Խավարամոլության այդ նույն դիծն են պաշտպանում որոշ գիտնականներ, որոնք իրենց անվանում են «հին պոզիտիվիզմի» կողմնակիցներ, օրինակ, Լյուիսը՝ «սոցիալական հոգերանության» նոր մարգարեն, որը «օբյեկտիվ հասկացությունը բնորոշում է որպես «ընկալման հնարավոր ֆունկցիա»։ Կամ, օրինակ, Պոսկուել Բորդանը, որը պնդում է, թե օբյեկտը մաքուր հասկացություն է և ունի լոկ գործիքային նշանակություն։ Այդ նույն գիծն են

պաշտպանում և ուրիշները, որոնք պնդում են, թե ֆիզիկական հասկացությունները իմացության զենքերը, գործիքներն են և որոնք հլնում են աբստրակտ սխեմաներից՝ անկախ արտաքին երևույթներից, անկախ օբյեկտներից։ Օրինակ, Մորից Շլյուկը պնդում է, թե մշտնջենական օբյեկտների թեորիան, որ դուրս է գալիս հետևողական էմպիրիզմի սահմաններից (այսինքն՝ ապրումի, զգայության սահմաններից — Տ. Ա.), զուրկ է ամեն մի իմաստից։

Այդ բոլոր թեորիաները ներդաշնակ, անգամ նույնական են օբյեկտի վերաբերյալ Մախի ու Ավենարիուսի թեորիաների հետ։ Հայտնի է, որ Մախը օբյեկտը դիտում էր որպես ընկալման չեզոք տարրերի կոմպլեքս։

Շատ ռեակցիոն ֆիզիկոսներ ու բնագետներ այժմ կանգնել են սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայության ֆիդեիստական գրոշի տակ և շարունակ փորձեր են անում դիտությունը կաշկանդել այդ փիլիսոփայության նեղ շրջանակներում։ Այդ տեսակետից առանձնապես ջանք էր թափում ոչ անհայտ ռեակցիոներ, փիլիսոփա և բնագետ Վիկտոր Ֆ. Լենցենը։

Արդեն հիշատակված «Գիտության փիլիսոփայությունը» աշխատության մեջ, գիտակցաբար գիտությունը չբաժանելով ռեակցիոն և պրոգրեսիվ գիտությունների, Վ. Ֆ. Լենցենը փորձում է ապացուցել, որ ամբողջ ժամանակակից գիտությունը իբր թե ագնոստիկական, ռելյատիվիստական է։ «Գիտությունը,— գրում է նա,— նշանակում է քննադատական ակտիվություն, որն ուղղված է նորը հայտնագործելու նպատակին, ինչպես և հիմնվում է սիստեմատիկ իմացության այդպիսի գործունեության վրա»։

Ստացվում է, որ քննադատական ակտիվությունն ու քննադատական գործունեությունը կամ քննադատական սիստեմատիկ իմացությունը գիտություն է։ Գիտության այդպիսի բնորոշումը թույլ է տալիս, նախ, գիտությունների սիստեմի մեջ մտցնել ամեն ինչ, ամեն մի մտացածին բան, միայն թե դա լինի քննադատորեն ակտիվ կամ քննադատորեն սիստեմավորված գործունեություն, երկրորդ՝ այդ բնորոշումը իր մեջ չի ընդգրկում գիտության կողմից բնության ու նրա օրինաչափությունների, այսինքն՝ գիտության օբյեկտի ճիշտ արտացոլումը, որի հետևանքով գիտությունը միստիֆիկացիայի է ենթարկվում, դառնում է «զուտ մտքի» արտացոլում։

Զարմանալի չէ, որ Լենցենը շարունակելով էդդինգտոնի և այլոց գիծը, բազմիցս ընդգծում է, որ գիտությունը բնութագրվում է ոչ թե մատերիայի, այսինքն՝ օբյեկտի սպեցիֆիկությամբ, այլ միայն «իմացության մեթոդով (պրոցեդուրայով) ու ձևով»։

Ինքնին հասկանալի է, որ եթե գիտությունը օբյեկտ չունի, եթե գիտությունը մարդկային ակտիվությունների լոկ սիստեմավորումն է, ապա գիտության սիմվոլիստական պատկերացումը ձեռք է բերում հատուկ ուժ։ Գիտության ռեալ բովանդակությունը վերանում է, մնում են զուտ սիմվոլը կամ սիմվոլային նշանները։ Իր այդ «նոր» թեորիան Լենցենը երբեմն անվանում է «իրերի սիմվոլիստական պատկերացում»։

Կասկածի ենթակա չէ, որ «զուտ գիտության» թեորիան վերականգնելու այս ձգտումը ռեակցիոներները իրագործում են «զուտ մտքի», զուտ բանականության թեորիայի յուրահատուկ հիմնավորման ձևով։

Ֆալսիֆիկացնելով գիտության զարգացման պատմությունը, խարդախելով արդի գիտության նվաճումները, ժամանակակից ռեակցիոներները փորձում են ապացուցել, որ պրակտիկ պահանջները գիտությունը խթանում էին

միայն նրա զարգացման սկզբում։ «Արդի դարաշրջանը (մեր նոր ժամանակը)— ասում է նույն Լենցենը — բնութագրվում է զուտ գիտությունը զարգացնելու հարաճուն ձգտումով»։ Ռեակցիոներները փորձում են արդի ֆիզիկան, ամբողջ բնագիտությունը տոգորել «արժեքի», (ценности) նեոկանտական թեորիայի ոգով։ Գիտությունը, ասում են նրանք, պատասխան չէ մարդու պրակտիկ պահանջներին։ Գիտությունը պարզապես արժեք է կամ «բարձր արժեք»։

Մարքսիզմ-լենինիզմը ցույց է տալիս, որ «գիտությունը գիտության համար» սկզբունքը քարոզում է անգործունեություն, գաղափարազրկություն, գիտությունը զրկում է իր պրակտիկ նշանակությունից, նրան տալիս է զուտ էսթետիկական, մտահայեցողական բնույթ, մեռցնում է նրա կենդանի բովանդակությունը։

«Զուտ գիտության» կամ «գիտությունը գիտության համար» թեորիայի կողմնակիցները ձգտում են «ապացուցել», որ մարդկությունը չի կարող գիտությունը կիրառել գիտական «պրոգնոզներ», դիտական թեորիաներ ստեղծելու գործում, որոնք մարդկությանը ելք են ցույց տալիս արտադրության կապիտալիստական եղանակից, որ գիտությունը, իբր թե, հիմք չի տալիս և մարդկությունը չի կարող կանխատեսել ու գուշակել ապագայի իրադարձությունները։ Գիտությունը, ասում են նրանք, կարող է զարգանալ միայն տարերային ուղիով և որոշակի արդյունքների հասնել տարերայնորեն, պատահաբար։ Նրանք ձգտում են ապացուցել, թե գիտությունը չի կարող և չպետք է որոշակի նպատակներ դնի իր առջև։ Գիտությունը չի կարող բացատրել. ամենաշատը, որ նա կարող է անել՝ դա իրադարձությունների նկարագրությունն է, կամ զուտ նկարագրությունը։ «Ուր որ մեզ տանում է իրադարձությունների ճակատագիրը, այնտեղ էլ կլինենք մենք»,— ասում են այդ «գիտնականները»։

Ֆիդեիզմը, ասում է Վ. Ի. Լենինը, չի հերքում գիտությունը, այլ բացատրում է «գիտության չափից դուրս հավակնությունները»։ Ժամանակակից ռեակցիան, որքան էլ այն ագրեսիվ-կղերական լինի, չի համարձակվում բացահայտորեն ժխտել գիտությունը, բայց աշխատում է գիտությունը դարձնել իդեալիստական փիլիսոփայության, տերտերականության աղախին։

Բուրժուական փիլիսոփայությունը, զրկված լինելով գիտության նվաճումները լրջորեն ընդհանրացնելու հնարավորությունից, փորձում է սոփեստաբանական սեթևեթանքների ու ֆիդեիզմի միջոցով մնալ «գիտական թեորիայի» շրջանակներում, մնալ դիտության դիրքում։ Հենց այդ կետում էլ դրսևորվում է կապիտալիստական արտադրական հարաբերությունների և կապիտալիստական արտադրողական ուժերի անհամապատասխանության կողմերից մեկը։ Առաջ է գալիս անլուծելի հակասություն, այն դեպքում, երբ գիտական հայտնագործությունները բացահայտում են բնության և հասարակության դիալեկտիկական խոր օրենքները, բուրժուական փիլիսոփայությունը փորձում է մթագնել գիտության եզրակացությունները, դրանով իսկ ստեղծում է իդեաների ճգնաժամ, դիտական թեորիաների ճգնաժամ։ Գիտության զարգացումը, որը վերջին հաշվով արտացոլում է արտադրողական ուժերի զարգացումը, հասցնում է բուրժուական փիլիսոփայության խորը ճգնաժամին։ Լենինը բազմաթիվ օրինակներով ապացուցեց, թե այն փիլիսոփայությունը, որը պաշտպանում է այնպիսի արտադրական հարաբերություններ, որոնք

այլևս անընդունակ են իրենց մեջ մարմնավորել արտադրողական ուժերի և գիտության նվաճումների հետագա զարգացումը, անխուսափելիորեն դառնում է ռեակցիոն, հակաինտելեկտուալ։

Այսպիսով, գոյություն ունի գիտության բնագավառում պրոգրեսիվ տենդենցների և բուրժուական աշխարհայացքի բացահայտ անհամապատասխանություն։ Բուրժուական աշխարհայացքը կաշկանդում է գիտությունների զարգացումը և ձգտում է մեկուսացնել գիտությունը առաջավոր փիլիսոփայական թեորիայից, վարակում է նրան իդեալիստական գնոսեոլոգիայի ախտով։

Գիտական թեորիայի փոխարեն՝ բուրժուական փիլիսոփայությունը «զարգացնում» է սոփեստական, մահացող մետաֆիզիկական մեթոդ, ծայրահեղ իդեալիստական սիստեմներ։ Կործանվելով, բուրժուական փիլիսոփայությունը փորձում է իր հետևից տանել բնական գիտությունները։

Հենց այդ իմաստով էլ բուրժուական ամբողջ գիտությունը, այդ թվում քաղաքատնտեսությունը, սոցիոլոգիան, բիոլոգիան, ֆիզիկան, ապրում են ճգնաժամային խոր պրոցեսը։ Այժմ գիտությունից, կապիտալիզմի պայմաններում հանում են ամենառեակցիոն, ֆիդեիստական եզրակացություններ։ Բուրժուազիան կյանքի է կոչել այնպիսի ուժեր, որոնց նա այլևս ի վիճակի չէ հաղթահարել։ Ամեն օր գիտության բնագավառում կատարվող հայտնագործությունները ու գյուտերը հակասում են նրա աշխարհայացքին, նրա փիլիսոփայությանը։ Գիտության մեջ կատարվող ռևոլյուցիան հաստատում է փիլիսոփայական մատերիալիզմի դրույթները և ժխտում է փիլիսոփայական իդեալիզմի դրույթները։

Տվյալ էտապում, երբ ՍՍՌՄ-ում և ժողովրդական դեմոկրատիայի երկրներում տեղի է ունենում սոցիալիստական կուլտուրայի ու գիտության ծաղկում, կապիտալիստական երկրներում ծավալվում է ոչ միայն տնտեսական ճգնաժամը, այլև ֆիզիկայի, բնագիտության և կուլտուրայի ճգնաժամը։

Կապիտալիզմի արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների միջև եղած խոր հակասությունը, կապիտալիստական արտադրական հարաբերությունների լիակատար անհամապատասխանությունը արտադրողական ուժերի բնույթին՝ ծնունդ են տվել այնպիսի ուժերի, որոնք արգելակում են, խոչընդոտ հանդիսանում գիտության զարգացմանը։ Կապիտալիզմի երկրներում ռեակցիոն ուժերը քարոզում են մարդատյացության կուլտուրա, գանդրստերիզմ, պոռնոգրաֆիա, միստիկա, անկումայնություն, անառակություն։ Գիտությունը նրանց մոտ ծառայում է ո՛չ թե ժողովրդին, այլ մի բուռը կապիտալիստների։ Նա մոնոպոլիստների ձեռքին դարձել է կործանարար ուժերի, աշխատավորների լայն խավերի դժբախտության աղբյուր և ենթակա է զարգացման այնքանով, որ ապահովում է առավելագույն շահույթ մոնոպոլիստների համար։

Ավելին. արտադրության կապիտալիստական եղանակը կաշկանդում է հասարակության լայն խավերի ստեղծագործական հնարավորությունները, ոչնչացնում է նորի, պրոգրեսիվի սաղմերը, բնակչության հսկայական մեծամասնությանը պահում է պասսիվ վիճակում և ձգտում է սպանել ժողովրդի ընդերքում թաքնված հսկայական ստեղծագործական ուժերը։

Զրկելով ժողովրդական մասսաներին կուլտուրայի, կրթության բարիքներից, պահելով նրանց խավարի ու տգիտության մեջ, կապիտալիզմը, այսպիսով, կանխամտածված ու մեթոդիկորեն ոչնչացնում է նոր, առաջավոր

կուլտուրայի առաջացման բոլոր հնարավորությունները, արմատավորում է այն բոլոր հետամնացը, որն ապրել է իր դարը։

Կապիտալիստական վերնաշենքը կաշկանդում է գիտությունը, սահմանափակում է նրա զարգացման հորիզոնը, նրան մղում դեպի քայքայում։

Մեծ Լենինը սովորեցնում է, որ դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդի, մարքսիստական աշխարհայացքի կիրառումն է, որ նպաստում է գիտության զարգացմանը։ Կյանքում և գիտության մեջ մարքսիստական աշխարհայացքի պրակտիկ կիրառումը միաժամանակ պահանջում է արմատապես վերափոխել կապիտալիստական հասարակությունը։

Գիտության զարգացումը, նրա նվաճումները, արդյունաբերությունը, հասարակական պրակտիկան, ասում է Լենինը, ապացուցում են, որ մարքսիստական դիալեկտիկան հանդիսանում է ամբողջ գիտական պրոգրեսի ամենախոր ամփոփումը և միաժամանակ բնության իմացության բնագավառում նոր նվաճումներ ձեռք բերելու ելակետը, հիմնական մեթոդն ու թեորիան։ Լենինը գիտության նորագույն նվաճումների լայն ամփոփման հիման վրա ցույց տվեց, որ դիալեկտիկական մատերիալիզմը ամենառևոլյուցիոն գիտությունն է և դրա հետ միասին բոլոր գիտությունների անսահման ծաղկման մեծագույն պայմանը։ Սակայն, չի կարելի այդ հիման վրա հետևություն անել, որ դիալեկտիկական մատերիալիզմը անցյալ գիտության նվաճումների սոսկ գումարն է, ինչպես այդ փորձում են անել դիալեկտիկական մատերիալիզմի թշնամիները։ Գիտության Մարքս-Լենինյան ընդհանրացումը ոչ թե անցյալ գիտության սոսկ գումարումն է, այլ նրա վերափոխումը, ռևոլյուցիա է և մեծագույն սխրագործություն գիտության մեջ։

Դիալեկտիկական մատերիալիզմը ամբողջական ուսմունք է և կիրառելի է բնության, հասարակության ու մարդկային մտածողության երևույթների բոլոր ոլորտների նկատմամբ։ Դիալեկտիկական մատերիալիզմը՝ հաղթահարեց բնության ու հասարակության վերաբերյալ ռեակցիոն, մեխանիստական և իդեալիստական թեորիաները։ Դիալեկտիկան հաղթեց սոփեստաբանությանը, մատերիալիզմը հաղթեց իդեալիզմին, բնության ու հասարակության երևույթների մետաֆիզիկական մեկնաբանումը մահացու հարված ստացավ դիալեկտիկական մատերիալիզմից։

Որպես փիլիսոփայական սիստեմ, գիտության մեջ դիալեկտիկական մատերիալիզմը հասարակական պրակտիկայի մեջ է տեսնում սեփական դրույթների զարգացման ու խորացման գլխավոր աղբյուրը, փիլիսոփայության դրույթների հաստատումը։ Դիալեկտիկական մատերիալիզմը, գիտնականի, մատերիալիստական գիտության համար մարտնչողի, կապիտալիստական ստրկացման դեմ պայքարող աշխատավոր մասսաների տրամադրության տակ է դնում գիտական ռևոլյուցիոն ուսմունքը, լայն ընդհանրացումներ, գիտական նոր հիպոթեզներ կատարելու, երևույթների էության մեջ թափանցելու, բնության և հասարակության օրինաչափությունները բացահայտելու նոր ուսմունքը։ Ընդսմին Լենինը զգուշացնում էր, որ դիալեկտիկայի սկզբունքները ինչ որ ապրիորի, բոլոր հարցերի պատասխանը պարունակող դոգմաներ չեն։ Դիալեկտիկական մատերիալիզմը ելնում է մարքսիստական այն հիմնական գրույթից, որ ճշմարտությունը կոնկրետ է, որ հենց այդ պատճառով էլ դիալեկտիկան ելնում է այն բանից, որ այս կամ այն հատուկ պրոբլեմի կոնկրետ

հետազոտությունը միայն կարող է պատասխան տալ գիտական կոնկրետ հարցերին։

Լենինը անժխտելի փաստերով ապացուցեց, որ դիալեկտիկական մատերիալիզմը վերջ դրեց գիտության ու փիլիսոփայության, թեորիայի ու պրակտիկայի խզմանը, որը մինչ այդ իշխում էր գիտական մտածողության մեջ։ Հենց այդ իմաստով էլ փիլիսոփայությունն առաջին անգամ դարձավ գիտական, ամուր կերպով հենվեց գիտության հասարակական պրակտիկայի վրա։ Նպաստելով գիտության խորացմանը ու զարգացմանը դիալեկտիկական մատերիալիզմը ինքը ևս հարստանում է գիտության պրոգրեսի համեմատ։

Հենվելով գիտության վրա, հասարակական պրակտիկայի որպես ճշմարտության չափանիշի վրա, Լենինը առանձին ուժով ընդգծում էր, որ բուրժուական փիլիսոփայությունը կտրվում է առաջադիմող գիտություններից. անտեսելով պրակտիկան որպես փիլիսոփայական կոնցեպցիաների չափանիշ, նա դրսևորում է իր ամբողջ աղքատությունը, բովանդակության սնանկությունը։ Հենց այդ պատճառով էլ բուրժուական փիլիսոփայությունն ապրում է իր անկման և քայքայման խոր ճգնաժամը։ Լենինը ապացուցեց, որ բուրժուական փիլիսոփայությունը ձգտում է ոչնչացնել այն ամենը, ինչ առաջավոր է ու ռևոլյուցիոն։

Սրանք են «ֆիզիկական» իդեալիզմի դեմ մեծ Լենինի մղած պայքարից բխող ամենահամառոտ հետևությունները։